ՆՈՐ-ԴԱՐ

№ 107 ՏԱՍՆԵԻԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ. 17 Յունիսի 1895 Հ. 17 Յունիսի ՏԱՍՆԵԻԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 107

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների գնի 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Հեռագրական թղթակցութիւն «Նոր-Դար»-ի

Հայոց գործերի դրութիւնից:

Ք ր ո ն ի կ ո ն.—Վ.Հ. Հայրապետի մի այցելութիւն. Նաւաբեկութիւններ. Նոր երկաթուղու ծրագիր. Ռէալական դպրոցն ուսարաններ. Օտարերկրեայ թղթակիցների ուղեորութիւն. Շահլամանի կոնցերտը. Նաւթի նոր չափրուան. Նոր հրատարակութիւններ. «Münch. Allg. Zeit.»-ի յօդուածը:

Թ ղ թ ա կ ց ու թ ի ւ ն ն ե ր.— Նամակ Թիւրքիայից—(2 հատ); Նամակ Սիբիրից—Իրկուտսկ:

Ք ա ղ ա ք ա կ ա ն. — Ապստամբութիւն Մակեդոնիայում. Քաղաքական լուրեր:

Հ ե ռ ա գ ի ր ն ե ր:

Ա-Ֆ ի ն:

Բ ա ն ա ս ի ր ա կ ա ն.—Քեարիմ-խանի նոր ազանդը:

Տ ե ղ ե կ ա տ ո ւ:

Ա յ տ ա ր ա ր ա ւ թ ի ւ ն ն ե ր:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ «ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

—

ՄՈՍԿՈՒԱ, 16 յունիսի, ժամը 6-ին 10 րոպէին.—Երէկ ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսն առաւօտեան ժամը 11-ին 30 րոպէին գուազանակիր Յուսիկ Երկրորդի, Նահապետ վարդապետի և Բեսարաբիայի թեմի կառավարիչ Յուսիկ վարդապետի ուղեկցութեամբ այցելեց Մոսկուայի ընդհանուր-նահանգապետ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Սերգիյ Ալէքսանդրովիչին, որի հետ ունեցած խօսակցութիւնը տեւեց 15 րոպէ: Այնտեղից Վեհափառ Հայրապետը գնաց Իվերի Աստուածամօր մատուռը, ուր համբուրելով հրաշագործ պատկերն և աղօթելով հաճեց գնալ միջնաբերդի (Կրեմլ) Ուսպենսկի տաճարը:

Ժամը 11-ին 45 րոպէին Վեհափառ Հայրապետին այցելեց Մոսկուայի քաղաքագլխի պաշտօնակատար Շչեգլովիտովը և Նորին Վեհափառութեանը տանը չգտնելով տարագրեց այցեքարտերի գրքի մէջ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԵԱՐԻՄ-ԽԱՆԻ ՆՈՐ ԱԶԱՆԴԸ

—

Հետաքրքիր է տեսնել, թէ ինչպէս երբեմն-երբեմն մեր դարու վերջերում դիտաւոր ստղերի պէս երեան են գալիս մարդիկ, որոնք ստեղծում են նոր ազանդներ և, գլուխ անցնելով այդ ազանդներին, աշխատում են որքան կարելի է շատ կողմնակիցներ գտնել:

Հնումն ազանդաւորները կողմնակիցներ որոնելիս բանի միջոցներ՝ սուր ուշուր էին գործ դնում. իսկ մեր դարում, երբ կրօնի ու դաւանութեան քիչ ու շատ ազատութիւն է տիրում ամենուրեք (բացի Թիւրքիայից), կողմնակիցներ գտնելու միջոցն է չողոքրդութիւնը, խաբեբայութիւնն ու փողի այժ:Այդ միջոցը գործադրում է մանաւանդ բողոքականների մէջ, այնուհետև նրանք անընդունակ են բարոյապէս և մտաւորապէս ապրելու. Օրինակ, Շուչու ընդամենը հօթան տուն բողոքականների մէջ, որոնք վերջերս բաժանուել են չորս խմբի (Աչակերտելոց կամ Միլոզաջան-ականներ, Ս. Հոգւոյ կամ Դանիէլ-ըէկ-ականներ, Մկրտչեան կամ Սողոմոն-ականներ և Ակնկալող կամ Օհան-ականներ), որքան մենք դիտել ենք, չկայ մէկը, որ չատ թէ քիչ կրթուած լինի, որ ըմբռնած լինի աւետարանի ոգին և ընդունակ լինի կրօնական համեմատութեան. ընդհակառակը, գրանք բոլորն էլ ագէտ, անգրագէտ և, որ զարմանալին է, ֆանատիկոս արարածներ են:

Մեր յօդուածի նպատակն է խօսել մի բողոքվին նոր և չատ հետաքրքիր ազանդի մասին, որ լոյս է ընկել վերջին տարիներս ու տարածուել Շուչու չիա գաւառութեան պատկանող մոլոկանդ և փանատիկոս մահմեդականների մէջ:

Պարսկաստանի մայրաքաղաք Թեհրանում, ուր մոլլաների, սէյիդների, մուշտիդների ու չէյխերի ամբողջ լեգէոններ կան, որոնց մի մասը մզկիթներում, մի մասը ժողովարաններում, իսկ մեծ մասը հրապարակաւ փողոցներում անդադար քարոզում են ուղղափառ Մուհամմէդի զուռանը, ահա այդ քաղաքում, ուխտաւորական թուականում, գիտաւոր ատղի պէս լոյս է ընկնում ուսումնական մի խան՝ Քեարիմ անունով:

Քեարիմ-խանը, չհաւանելով զուռանը և նրա օրէնքները, բարւօք է համարում յօրինելու մի նոր կրօնագիրք՝ Փիրք Քեարիմ-խանի, վերնագրով: Քեարիմ-խանի կրօնագիրքը միանգամայն հակառիպն է ներկայանում զուռանի. այն զուռանի, որը մինչև այժմ մահմեդականների միակ օրինագիրքն է կազմում: Քեարիմ-խանը իւր օրինագրքով սկսում է բացարձակ քարոզել իւր դաւանանքը և կարճ ժամանակի ընթացքում բացի էկսէնէ ուսանական անունով հռչակուելուց, մեծ ընդունելութիւն է գտնում պարսիկ բարձրատիճան անձերի մէջ: Թէ Թեհրանում այդ նոր Մուհամմէդը որքան կողմնակիցներ ունի, ճիշտ յայտնի չէ մեզ. միայն այսքանը կասենք, որ պարմանալի կերպով Քեարիմ-խանի ազանդը տարածւում է ոչ միայն Մուհամմէդի ուղղափառ զաւակների երկրում, այլ և ուսաց կայսրութեան մէջ ապրող Թուրքերի մէջ:

Քեարիմ-խանի կրօնագիրքը բաղկացած է ընդամենը տասը գլխից: Առաջին գլխում հեղինակը մի երկար յառաջաբան-յօդուածով բացատրում է այն դժբաղդ երեոյթը, թէ ինչպէս մահմեդականները չեղուած լինելով իրենց ճշմարիտ կրօնից, մի քանի ազանդի բաժանուած, սիալ ու ծուռ են մեկնում ճշմարիտ կրօնի միտքը, որը և առիթ է տալիս յաճախակի ներմուրթիւնների մէջ ընկնելու: «Այս ի նկատի ունենալով,—ասում է հեղինակը,—ես երկար ու բարակ մտածելուց յետոյ եկայ այն եզրակացութեան, որ մեր ժողովրդին անհրաժեշտ է մի այնպիսի օրէնք, որն աւելի նպատակաւոր լինի ներկայ ժամանակի պահանջներին: Ես խորը թափանցեցի բնութեան գաղտնիքների մէջ,—չարունակում է Քեարիմ-խանը,—քննեցի և եկայ այն համոզմանը, որ իմ տուած մեկնութիւնները պրանց չէ դոհացնում:

Հասկանում եմ. խեղճ մարդիկ. քանի որ խեղճ հայն է, որ դրութեան բոլոր ծանրութիւնն իւր վրայ կրում է և ամեն տեսակ գազանային բռնութիւնների է ենթարկուած, ինչ պիտի հասկանայ:

Ես ձեզ գրել էի, որ վերանորոգութեան ծրագիրը ներկայացրին սուլթանին երեք պետութիւնների ներկայացուցիչները, որի պատասխանին սպասում էին: Բայց թիւրքը իւր ճարպիկ դիւանագիտութեամբ ժամանակ վաստակելու համար սկսեց խաղը խաղալ: Նախ յայտնեց, որ սկզբունքով ընդունում է վերանորոգութեան ծրագիրը, դրա վրայ փոխեց մեծ վեզիրին և նրա տեղը նշանակուեց Սայիդ փաշան:

Սրա նշանակութիւնն այն բացատրութիւնը արուեց, թէ Սուլթանը տեսնելով անեղանելի կացութիւնը և մանաւանդ թիւրքերի մէջ իրեն դէմ եղած չարժման ծաւալումը, ստիպուած պիտի խոնարհի և պիտի ընդունէ տերութիւնների կողմից առաջարկուած ծրագիրը:

Այս ծրագրի մանրամասնութիւնը չըգրեցի ձեզ, իսկ ապրիլի 25-ին գրել եմ ձեզ նրա բովանդակութիւնը: Զըգրելու բուն պատճառն այն էր, որ այդ ծրագիրն իսկապէս չէ կարող դոհացնել հայոց բաղձանքը, և ձեր ս. պատրիարքը դրա դէմ բողոքել է: Միջանկեալ պիտի ասեմ, որ ս. պատրիարքը մի սխալմունք ունի արած այս գործին մէջ, բայց դրա պատճառն արժանաւոր խորհրդակցի բացակայութիւնն է: Այս մասին կը գրեմ ձեզ մի ուրիշ անգամ:

Դառնանք գործին:

Սուլթանը ակամայ նշանակեց Սայիդին եպարքոսութեան պաշտօնին, որովհետև վերջինս թիւրք ժողովրդեան սիրելի է և ճանաչուած է իբրև հայրենասէր: Եթէ Սայիդի եպարքոսութեան օրով Սուլթանը ընդունելու լինի Հայաստանի վերանորոգութեան ծրագիրը, թիւրք ժողովրդեան մէջ խռովութիւն չի լինիլ, քանի որ ինքը Սայիդ փաշան էլ ընդունում է: Բայց, a propos, պիտի նալել է, որ թիւրքերը մի առած ունեն, կարծեմ հայերին էլ հասկանալի է, այն է, թէ գինուց չինած քացախը ա-

ւելի թունդ կլինի: Սայիդի մասին այդ են ասում, որովհետև Սայիդի հայրը հայ է և ինքը ծնունդ է Էրզրումում:

Սայիդ փաշան եպարքոս գառնալուն պէս գեսպաններին յայտնեց, որ ինքը պիտի գործէ և սկսեց այլ և այլ դիւանագիտական ճանապարհներով գործը յետաձգել այս և այն առարկութիւններն աներով ծրագրի որոշ յօդուածների մասին:

Այժմս ծրագրի գործը մնացել է հետևեալ կէտի վրայ: Այս նոր եպարքոսը թէ գրով և թէ անձամբ դիմում է գեսպաններին թէ Բերլինեան պայմանագրի մէջ չըկայ մի կէտ, որ որոշում լինի բարենորոգումների վրայ եւրոպական մի որևէ ներոյժ, այն ինչ այժմեան առաջարկութեան մէջ իբրև թէ երեք պետութիւնների կողմից անմիջական կոնտրոլ է պահանջւում: Գեսպանները պատասխանում են, որ Բերլինեան պայմանագրի 61-րդ յօդուածը տալիս է տէրութիւններին հսկողութեան իրաւունքը, բայց եթէ այդ չլինէր էլ, վերջերս կատարուած դաշնութիւնների Եւրոպային ներոյժ կատարեալ իրաւունք են տալիս: Սրա վերջնական պատասխանը առաջիկայ չաթաթ յունիսի 14-ին է տացւում, որի մասին դուք հետագրով տեղեկութիւն տացած կըլինէք արդէն: Թուրքը մտածում է մէկ ուրիշ նոր միջոցով պատուել այս դրութիւնից և ժամանակ վաստակել:

Շուտով ձեզ պիտի հետագրը հաղորդէ Սայիդ փաշայի անկումը, եպարքոսական փոփոխութիւնը:

Սայիդին պիտի յաջորդէ Քեամիլ-փաշան:

Այստեղ իբրև լուր տարածուած է, թէ Գերմանիան թիւրքի բարեկամն է և թէ սա Գերմանիայի նիզակակից է. այս օրերս էլ Քիլի մեծ հանդէսներն են կատարւում, ուր գնացել է և Անգլիայի մեծ մարդասէրը՝ Գլադստոնը: Սրա մասին ասում են, որ պիտի աշխատէ համոզել Վիլհելմ կայսրին, որ արևելեան խնդիրը խաղաղութեամբ լուծէ:

Պէտք է ընդունենք, որ հայոց խնդիրն իւր չրջանից դուրս է գալիս և արդէն արևելեան խնդրին է անցնում...

Քանի որ խօսքը Գերմանիայի վրայ եկաւ, ասեմ, որ ինձ մօտ եկան բարձր

մեր դուռանը ոչ այլ ինչ է, եթէ ոչ անհիմն ու աւելորդաբանութիւններ պարունակող մի հէքիաթագիրք և ոչ կրօնագիրք»:

Երկրորդ գլխում հեղինակը մի կարճ տեսութիւն է տալիս Աստուածոյ գոյութեան մասին և պնդում է, թէ չկայ մի ուրիշը բացի Ալլահից, որ կառավարում է ամբողջ տիեզերքը»:

Երրորդ գլխում հեղինակն ամենապարզ կերպով բացատրում է Մուհամմէդի և Ալիի աչնչութիւնը և նրանց համարում է հաւասարապէս անաւակ մահկանացուներ, միանգամայն հերքելով և մերժելով մահմեդականների մէջ արմատացած այն միաքն ու գաղափարը, թէ Մուհամմէդն Աստուծոյ փոխանորդը կամ մարգարէն է:

Այս գլխս չարունակելով չորրորդ գլխում խօսում է հոգու չգոյութեան մասին և հաստատում է այն հին գաղափարը, որը տիրում էր Քրիստոսից առաջ եգիպտացիների մէջ: Հեղինակի կարծիքով, մարդս և անասունը մեռ-

պիրք ունեցող հայեր, որ ես հակացնեմ ուր հարկն է և պրեմ հերոսական թերթերին, թէ Գերմանիան քանի որ անտարբեր կը զտնուի դէպի հայոց տառապանքները և կօգնէ Թիւրք կառավարութեան, հայերը սկսել են համակայնութիւն կայացնել, որ այլևս Գերմանիայից ապրանք չգնեն։

Պէտք է ասեմ ձեզ, որ Օսմանեան կայսրութեան մէջ 100-ից 75% գերմանական ապրանք է ծախւում, և այն մեծ մասամբ, հայերի ձեռքով...

Վ.հ. Կաթողիկոսի Պետերբուրգում պատ փառաւոր ընդունելութիւնը տրպատրութիւն արեց երկու կողմի վրայ էլ. հայերը ուրախութեան և երախտագիտութեան զգացումներով լցուեցան, իսկ Թիւրքը չատ խեթ աչքով նայեց։

Դուք Թիւրքիայում ուրիշ երկու փոքր կաթողիկոս էլ ունէք. երկուսից մէկի Սուց կաթողիկոս ընտրուեց, ինչպէս ինձ հաղորդեցին, Ալէքսեեան Գրիգոր եպիսկոպոս։

Այս ընտրութեան մասին չատ բաներ կը լսւատմեն։

Խնդիրը կարևոր լինելով, լաւ ուսումնասիրելուց յետոյ կը գրեմ ձեզ այդ մասին։

Ներկայիս այսքանս գիտեմ, որ Կիլիկիայի ժողովուրդը ուզում էր իրեն կաթողիկոս ունենալ Մելքիսեդեկ սրբազանին։ Այս բարձր հովիւին ես ճանաչեցի պապի մի կոնդակի դէմ հրատարակած իւր փառաւոր պատասխանով, որի անգլիական թարգմանութիւնը այժմ էլ սեղանիս վրայ է։ Հետաքրքրութիւնս չարժելով աւելի ծանօթանալ կամեցայ այդ պատկառելի եպիսկոպոսի արժանաւորութիւնների հետ և կարող եմ չնորհաւորել ձեզ, որ Նորին Ամենապատուութիւնը ձեր հոգևորականութեան պարծանքը կարող է լինել, իսկ եւրոպական բարձր հոգևորականութեան զարդը։

Մի անգամ միայն առիթ ունեցայ մի հանդիսի ժամանակ տեսնելու նրան. Նորին բարձր Սրբազնութեան արտաքինն էլ ազդեցիկ է և պատկառելի։

Տեղակ հայերն ասում են ինձ, որ նշանաւոր քարոզիչ է և նրա գրելու ոճը թէ բարձր է և թէ պարզ ու գրաւիչ։ Ի հարկէ այդ ամենը դուք ինձանից աւելի լաւ կիմանաք, բայց այս տպերը դրեցի միայն, որ պարզեմ ձեր հայերի պակասաւոր կողմը։ Այդ պատկառելի և նշանաւոր հովիւը նախանձի և մանր մարդկանց ատոր ինտրիգների զոհ է. Սուց կաթողիկոսական թեկնածութիւնից հրաժարուեց Մելքիսեդեկ սրբազանը, թէպէտև Կիլիկիայի ժողովուրդը միաբերան նրան էր ուզում...

Պատի ժամանակը ուշանում է, վաղը կը գրեմ այս մասին միքանի բան, ինչ-

---

նոյնն են. տարբերութիւնը միայն նրանում է, որ մարդս կարողանում է խօսել ու յայտնել իւր միտքը, իսկ կենդանի անասունը չի կարողանում. բայց երկուսն էլ հոգի ասած բանը չունին. նա ասում է. մարդս էլ նոյնպիսի անհոգի արարած է, որպէս ամեն մի այլ արարած»։

Հինգերորդ գլխում Քեարիմ-խանը խօսում է հանդերձեալ կեանքի՝ արքայութեան և դժոխքի մասին (Ջահաննամ և Ջհաննամ)։ Ինչպէս հոգու դոյութիւնը մերժում է, այնպէս էլ հանդերձեալ կեանքի համար ասում է, որ այդպիսի կեանք չկայ և չի էլ կարող լինել։ Նրա կարծիքով, հանդերձեալ կեանքն այս աշխարհումս է. սրա համար էլ Քեարիմ-խանը մարդկանց կեանքը դնում է չորս աստիճանի (Թաբաղայ) տակ (ղուռանը հանդերձեալ կեանքը հօթը Թաբաղայի է ընդունում). այսպէս, օրինակ, արքայութիւնը, Քեարիմ-խանի կարծիքով, պարունն է. դժոխքը՝ ձմեռը։ Արքայութիւնից մի աստիճան ցածը հաչում է ամառը, իսկ գժոխքից մի աստիճան բաւարար տեղը՝ աշունը։ Այս ամենի վրայ հիմնուած՝ Քեարիմ-խանն աշխարհիս բոլոր մարդկանց բաժանում է չորս դասակարգի, որոնք են—չատ հարուստներ, միջակ կարողութեան տէրեր, աղքատներ և բոլորովին աղքատներ։

Երկրի վեցերորդ գլխում Քեարիմ-խանը մի կարճ տեսութիւն է անում Քրիստոսի ծննդեան համար ճիշտ այնպէս՝ որպէս վկայուած է աւետարանում և դալիս է այն համոզմանը՝ թէ «Քրիստոս ոչ այլ ինչ էր, եթէ ոչ Հոգին Աստուած, որ իջաւ մարդարէի պաշտօնով»։ Սրա վրայ էլ հիմնուած ասում է, որ «աշխարհի սկզբից մինչև այսօր դեռ չի եղել մի այնպիսի Մեծ և Արդարասէր Մարդարէ, որպիսին Իսան էր» (Ցիտուսը)։

Է. Ը. Թ. և Ժ. գլուխներում հեղինակը երկար ու բարակ խօսում է ամուսնական խնդիրների մասին և իրաւունք է տալիս ամուսնութիւնը կատարելու առանց խորութիւն դնելու ազգականների, արիւնակիցների մէջ մինչև այն աստիճան, որ Թոյլ է տրւում, ինչպէս և Երուսաղէմում կատարուած վերջին խառնութեան առթիւ։

Ձեր հայերին մօտենալով, ես տեսնում եմ նրանց մէջ մի խոշոր պակասութիւն, այդ անմիտ և անհաչիւ նախանձն է։ Իրենք հայերը ինձ ասում են, որ այդ հայերի ցեղական ախտն է, որ իրենց նախահայրերն իրենց աւանդել են։

Դուք ինձ սովորեցրիք հայերին սիրել, հայերի գործերով հետաքրքրուել, բայց խոստովանում եմ, քանի հայերին մօտենում եմ, ինչ որ մի բան իմ մէջս կատարւում է—նրանք ինձ անհամակրելի են դառնում։ Դրա բացատրութիւնը ես գտնում եմ այդ «պատմական» նախանձի մէջ։ Եւ արդարև հայերը իրենց զեղեցիկ և գովելի յատկութիւններով հանդերձ օտարներիս պէտք է որ անհամակրելի լինեն իրենց ոչ համակրելի յատկութիւններով, որոնց մեծը՝ նախանձն է։

Բայց դուք կարող էք մխիթարուել ասելով, որ ամենալաւ ձին էլ մի պակասութիւն ունենում է։

Amicus

Յունիսի $^{10}/_{22}$ Կ. Պոլիս.

ՔՐՈՆԻԿՈՆ

Պետերբուրգից «Պրիազ. Կրայ» թերթին հեռագրում են, որ յունիսի 10-ին Վ.հ. Հայրապետն այցելել է օտար գաւանութեան դեսպանատների դիւանատոր Մոսոլովին։

—

Ատրախանից հեռանալն են հեռագրում մայրաքաղաքի թերթերին.

Յունիսի 8-ին լոյս 9-ի առաւօտը Ատրախանից 40 վերստ հեռաւորութեամբ փոթորկից ջարդուխուճապ մի առևտրական բարժ, որից Վոլգա գետը թափուեց հարիւր հազար պուդ նաւթային մնացորդ։ Բալակովի մօտ խորասուզուեցաւ Բագուից երկաթ առնող մի բարժ։ Ատրախանից ներքև ջարդուած են ձկնով և աղով բեռնաւորուած մի քանի բարժեր և ձկնորսական նաւեր։ Բոլոր գետի վրայ, Ատրախանի մօտ խարխափից դուրս պրծած Նիժնի-Նովգորոդի համար չինուող Իալի մի լողացող հիւրանոց և ձգից նրան մի բարժի վրայ, որից գետը թափուեց մօտ 30,000 պուդ մազութ։ Բոլոր խորտակուած և մնասուած նաւերի թիւը հաչւում են մինչև 15 հատ։ Ընդհանուր մնասը խիստ մեծ է։ Ասում են, որ ծովի վրայ էլ զժբաղդութիւններ են պատահել, բայց դեռ ես տեղեկութիւններ չկան։

—

Պրինց Կ. Պ. Օլդենբուրգսկին և իշխան Ն. Դ. Միրզբէլսկին, ինչպէս լսել է «Վաւկազը», խնդրամատոյց են լինում Թիֆլուսի քաղաքագլուխ ստանալու, որ իրենց հաչուով ճանապարհները որչեն երկաթուղի անցկացնելու համար Կովկասեան լեռնաչղթայի վրայով Վլադիկաւկազի երկաթուղու Պրոխլադնայա կայարանից Զուգդիդի վրայով դէպի Փոթի։ Նոր երկաթուղին անցնելու է Բակուն և Ինգուր գետերի հովիտներով և կարելու է Կովկասեան լեռնաչղթան Էլբրուսի մօտ։

—

Թիֆլիսի ռէալական գպրոցի 7-րդ լրացուցիչ դասարանն աւարտել են այս տարի 6 հոգի, 6-րդ դասարանն աւարտել են 12 հոգի։ Բոլոր աւարտողներն, ըստ ազգութեան, բաժանւում են հետևեալ կերպով. ռուս—11, հայ—5, վրացի—1 և պարմանացի—1։

—

Այս ամառ դէպի Կովկաս մի ընդարձակ ուղևորութիւն են կատարելու օտարերկրեայ լրագիրների միքանի թղթակիցներ։ Նախ քան Կովկաս գալը նրանք գնում են ծանօթանալու Նիժնի-Նովգորոդի համառուսական ցուցահանդէսի աշխատանքների ընթացքի հետ։

—

Վաղը, կիրակի, յունիսի 18-ին, կը դնէ պ. Ն. Շահրամանեանը Թիֆլիսի արքունական թատրոնում տալիս է երրորդ և վերջին կոնցերտը Պետերբուրգի կոնսերվատորիայի պրոֆեսորուհի Վ. Ա. Կաչինսկայի մասնակցութեամբ։

—

Այս օրերս Ե. Ասպրուայեի նաւթարդիւնարանում, Իոմանի հողերի վրայ, 138 սաժէն խորութիւնից, «Վասպի»-ի ասելով, նաւթի նոր չատրուան է խըփել։ Սկզբներում արտավիժուած է մօտ 600 հազար պուդ նաւթ, բայց յետոյ չուտով արտավիժումը դադարել է։

—

Մենք սուացանք Գրիգորիս Երզնկեանցի նշանած «Պատմութիւն մանկավարժութեան» (հայկական կրթական բաժնով) գիրքը, որ հրատարակուած է սոյն 1895 թուին Թիֆլիսում։ Սա առաջին անգամն է, որ մի այսպիսի գիրք է լոյս տեսնում հայոց գրականութեան մէջ։ Այս գրքի մասին մենք կը խօսենք առաջիկայում։

—

Մենք ստացել ենք Ս. Ա. Մարկի «О народныхъ санаторіяхъ для слабогрудныхъ. Къ вопросу о борьбѣ съ бугорчаткой» խորագրով բրոշիւրը, որ լոյս է տեսել Կովկ. Կայս. Բժշ. Ընկ. հրատարակութեամբ Թիֆլիսում սոյն 1895 թուին։ Սա մի հետաքրքիր զեկուցում է, ի միջի այլոց, այն մասին, թէ ինչպիսի կրիւ է մղւում թոքախտի դէմ Արևմտեան Եւրոպայում և Ռուսիայում և թէ ինչպիսի ձգտում կայ ներկայումս բարելաւելու չքաւոր թոքախտաւորների վիճակը։

—

Տեղի ունեցած պատճառով «Munch. Allg. Zeit.» Թիւրքիայի դրութեան մասին յօդուածի չարունակութեան տպագրութիւնը յետաձգուեց։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

(«Նոր-Դար»-ի թղթակցութիւն)

—

Կ. ՊՈԼԻՍ, 10 յունիսի։

Վերջացաւ Սուց կաթողիկոսական ընտրութիւնն, բայց Պոլսոյ լրագրներում տուած տեղեկութիւններն անբաւական են խնդրոյն էական կէտերն պարզելու, որոնք չատ կարևոր են գոնէ իբրև պատմական իրողութիւն ապագային համար։

Տ. Մկրտիչ կաթողիկոսի մահէն ըզկնի մեծ աճապարանքն տեսնուեցաւ ընտրութիւն կատարելու համար։ Տեղապահի օրով որոչուած էր, որ ի Սիս ձեռնադրուած Աբրահամ եպիսկոպոսն երթայ և հակէ կաթողիկոսի և կաթողիկոսարանի գոյից վրայ, թեմական գործոց վրայ և այլն, մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնն։ Սակայն Աբրահամ եպիսկոպոսի պաշտօնն ունայնացաւ, մինչդեռ աէրութիւնէն իսկ հրամանագիրն պատրաստուած էր։ Եւ ուղղակի Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Յովհաննէսեանն ղրկուեցաւ ի Սիս կաթողիկոսական ընտրութիւնն անյապաղ կատարելու։ Սուց կաթողիկոսական թեմի հինգ եպիսկոպոսներ և քանի մի վարդապետներ ու այլ եկեղեցականք, որոնք Անգլիոյ դեսպանի միջամտութեամբ և օսմանեան վեհապետի ներողութեամբ բանտերէն ազած և ի Պոլիս կրգռնուէին, խնդրեցին պատրիարքարանէն որ յետաձգուի ընտրութիւնն, մինչև որ իրենց վիճակն որոչուի և իրենք ևս կարողանան մասնակցիլ կաթողիկոսական ընտրութեան, վասն զի ի Կիլիկիա երկու եպիսկոպոսներ միայն կը գտնուէին։ Սուցա խնդիրն չըլսուեցաւ և ընտրութիւնն փութով վերջացնելու մղումն տրուեցաւ։ Ընտրութեան նախնական արարիւնքն հաղորդուեցաւ պատրիարքարանին և սկսաւ կերպիւ հրատարակեցաւ լրագրաց մէջ ընտրելիաց ցանկն.—ս. պատրիարք 51 քուէ, Մելքիսեդեկ սրբազան 50, Ալէքսեեան սրբազան 49։ Սոյն ցանկին վերին լրացաւ ուրիշ հեռագրով—ս. պատրիարք և Մելքիսեդեկ սրբազան 50-ական քուէ, Ալէքսեեան սրբազան 45, այլ և երեք ընտրելիները՝ Գրիգորիս, Համայեակ և Բէքմեզեան (Սահն) իրենց քուէներով։

Մելքիսեդեկ սրբազան տեսնելով իւր անունն ընտրելեաց ցանկին մէջ՝ կըփութայ դրով խնդրել պատրիարքական վարչութենէն հանել ցանկէն, որ և կըկատարուի, և ապա տ. Գրիգորիս Ա. լէմթճեանի, տ. Գրիգորիս Յովհաննէս. սեանի և տ. Կիրակոս Բէքմեզեանի անուններն կըհետազրուեն ի Սիս, որ սոցա վրայ վերջնական ընտրութիւնն կատարուի։ Նոյնպէս պատրիարքարանի կողմէն կըհետազրուի տ. Մելքիսեդեկ սրբազանի հրաժարումն ընտրողական ժողովին, որ 4 յունիսի, կիրակի օրն, պիտի կատարէր ընտրութիւնն և առայս իւր նեռան կրյետաձգէ և երկիցս կըհետազրէ ի Պոլիս տեղեկ Մելքիսեդեկ սրբազանն յետս կոչելու իւր հրաժարականն յայտարարելով թէ ժողովն պատրաստ է միաձայնութեամբ անոր քուէ տալ։ Մելքիսեդեկ սրբազան կըվճռէ իւր հրաժարականին վրայ, անուշտ ունենալով խիստ բանաւոր և ծանրակշիռ պատճառ, և 7 յունիսի ժողովն կըկազմէ իւր նեռան և կընտրէ կաթողիկոս Տ. Գրիգորիս Ալէքսեեանն։

Ընտրելոյն մասին առարկութիւն չըկայ, բայց թէ ինչու աճապարանօք կը կատարուի ընտրութիւնն, քանի որ ընտրելոյն տաք ամիսներուն մէջ պիտի չկարենայ երթալ օծուելու և թէ ինչու համար բանտարկութենէ ազատուած Սուց եպիսկոպոսներու խնդիրն անլսելի կըմնայ,—սոյն կէտերուն վրայ տարբեր և տխուր կարծիքներ կըպատին։

Նամանաւանդ թէ ինչու ընտրողական ժողովն իւր ընտրելեաց ցանկն կըղրկէ ի պատրիարքարան և ինչ հիման վրայ խառն ժողովն իրաւունք կըտառնէ յապաւել նոյն ցանկն, մինչդեռ դաւառական ժողովներն ուղղակի կընուիրեն իրենց առաջնորդն և կընդունեն առանց որ և է առարկութեան։ Մի՞թէ Սուց կաթողիկոսութիւնն, որ կրպարունակէ բաւականին ընդարձակ պատասական առաջնորդութիւններ, աւելի տարբաս հանդամանաց մէջ կըգտնուի, որ պատրիարքական խառն ժողովն (և ոչ գոնէ երեսփոխանական՝ որ Կիլիկիայէն անդամներ ունի իւր մէջ) չթողուր, որ առանց իւր միջամտութեան կատարուի ընտրութիւնն։

Ո՛չ թէ Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ օրինաց, այլ նոյն իսկ օսմանեան պետութենէն չնորհուած Սահմանադրութեան մէջ այսպիսի օրինական յօդուած չկայ բնաւ Սուց կաթողիկոսական ընտրութեան նկատմամբ։ Ուր մարդ այսպիսի տարօրինակ կարգադրութիւններու կըպատահի՝ կըստիպուի հարցնել թէ՝ արդեօք Սուց կաթողիկոսութեան նկատմամբ մեր եկեղեցականութիւնն 20-25 տարիներէ ի

քարոզից արդէն Թուրք ժողովուրդը տեսնում է, որ Մոլլա-Դուլին հակազուռանական է, այդ պատճառով սկսում են տալ նրան։ Մոլլա-Դուլին չի յուսահատւում, այլ անընդհատ քարոզում է։ Եւ ահա այժմ, այս 2—3 տարուայ միջոցում, կարողացել է չատ կողմնակիցներ դտնել։ Այժմ Շուչու քեարիմխանականների (Թուրքաց լեզուով քեարիմխանլը) թիւը հասնում է մօտ հարիւր քան ընտանիքի, որոնք համարեա բոլորն էլ բէկեր ու խաներ են։ Ներկայումս Շուչու մահմեդականները բաժանուած են երկու խմբի՝ ղուռանականների և քեարիմխանականների, որոնք միմեանց հետ անհաչտ թշնամիներ են։ Ղուռանականներն այնքան ատում են քեարիմխանականներին, որ նրանց չէմքըն անգամ ոտ չեն դնում, նրանց հարսին, ջրին կամ մի որևէ ամանեղէնին ձեռք չեն դիպցնիլ «մուսուռաս» համարելով։ Եւ ղուռանականներն աւելի չատ կըհամաձայնուեն հայի հետ մօտ յարաբերութիւն ունենալ, քան թէ՝ քեարիմխանականների հետ։

Գ. Ա. Խաչատրեանց։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Հայկական Հարց)

—

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ 10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ։

—

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՐՏԱԿԱՐԳ

Ընկերներ։

Ձեզ յայտնի է, որ Հայաստանի հանրապետութեան հարցը, որ մեր ազգային կեանքի ամենակարեւոր հարցերից մէկն է, ներկայ ժամանակներում մի նոր շրջան է կազմում իր զարգացման մէջ։ Ինչպէս գիտէք, Հայաստանի հանրապետութեան հարցը ներկայ ժամանակներում ոչ միայն հայ ազգի, այլեւ ամբողջ Եւրոպայի ուշադրութեան առարկան է դարձել

ԵՔԷ տակաւին ձեր օրգանի ընթերցողները չգիտեն, թող գիտենան, որ այդ հեռագրից յետոյ առաջնորդարանում սկսեցին տեսի ունենալ խորհրդակցական ժողովները, սկսեցին խմբագրուել հեռագրները ըստ կարգին՝ ինչպէս առաջ, բայց մենք ըստ Ա.Դօ-ի չենք ուզում ասել, թէ հաղիւ ուրեմն գործերը մաքրուեցան բոլորովին, ինչպէս նա ասել էր Թեմական դպրանոցի տմբողջ ուսուցչական խմբի յանիբաւի և ապօրէն արձակման մասին, որ եղաւ ոչ օրինաւոր հոգաբարձական ժողովի

Երևանի Թեմ. դպր. քարտուղար՝
Մակար Տէր-Սարգսեանց։

Երևան, 13 յունիսի։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ



Ի ուշաց Հոգ. Ընկ.

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսսայի եւ Կ. Պոլսի միջեւ

Բաթում-ից դուրս է գնում՝

Շաբաթ օրերը լոյս կիրակի, գիշերուայ 3 ժ., չրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով. Նովոռոսիյսկի, Կերչի, Թէոդոսիայի, Եալտայի, Սեաստապոլի և Եւպատորիայի վրայով։

Երեքշաբթի օրերը՝ լոյս չորեքշաբթի, գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար չոգենաւը բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը՝ լոյս հինգշաբթի, գիշերուայ 4 ժամին, չրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Օրէնսայից գալիս է Բաթում

Երկուշաբթի օրերը առաւօտեան՝ ուղիղ ընթացքով։

Չորեքշաբթի և Ուրբաթ օրերը, երեկոյեան չրջանառու ընթացքով։

Երկուշաբթի օրերը, գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար չոգենաւը՝ չրջանառու ընթացքով.

Գործակալութիւնը գտնւում է Թիֆ. Կալ. բանկի գալերէյում №№ 117—118

Ընդրկով. երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիսից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիսից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7. ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիսից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիս հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիս է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիս դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիս-Յանձակ գուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր., հասնում Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիս դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին, հասնում է Թիֆլիս առաւօտուայ 7 ժ. 35 րոպէին։

Պատ. երկ. Ուղղութիւն դէպի Ջուլֆա

—

Թիֆլիսից հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղեւորւում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղեւորում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում վլադիկավկազ հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղեւորւում է առաւօտուայ ժամը 8 ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիս է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղեւորում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս հետեւեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՐԻՄՕ ԵԻ ԸՆԿ. ՄԱՏԻԿՕ
(Injection au Matico)

Թոյլտրուած է Ռուսիայում

Պատրաստուած է Մաթիւ տերևներից՝ պերուվինների բոյսի։

Պահեստն է Պարիզում
8 rue Vivienne, Paris
(M.), 17—15

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԴՈՐԹԱՐԱՆՆԵՐԻ



ԹՈՒՄԲԱՆԵՐ



ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ



ՍՏՐՈՒՆԱՑ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՒԶՈՒՐՆԱՆ

ՄՈՒԱՅՆԱՑՈՒՆ ԱՇԽԱՐՀԻ

Առաջին և երկարատև դերը — 60 կ. երկրորդը — 50 կ., երկրորդ անգամ — 1 ր.։ Ձանազարհանձնաժողովում է գնում իւրաքանչիւր անգամ 10 կ.։

Գրքերն 7 կ.։ Կոմիտէ Тифлисъ, Николаевская, №10, архитектору А. Джугурянъ. կամ Թիֆլիսի գրավաճառներին։

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԴՈՐԹԱՐԱՆՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՂԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ

Դ Ե Պ Օ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Музыкальное депо Б. М. Мириманяна Тифлисъ Дворцовая ул.

(652) 30—5.



ՍԱՊՈՆ «ԿԱՊՐԻԶ ՆԵՒԱՅԻ»
ՍԱՊՈՆ «ՍԱՖՈ»
ՍԱՊՈՆ «ՄԻՒՍԿ»

Պատուական հոտով և մանուանդ անուշահոտ է գործածիլու։

ПРОДАЕТСЯ ВЕЗДѢ.
Гл. складъ: С. П. Б. Александр. площ. 9 МОСКВА. Никольская, д. Шереметева ВАРШАВА, Новый Свѣтъ, 37

(М.) 17—15

ԽՈՏԵՐԻ ԿԱՐԱՄԷԼ

Հաչէ ԵԷՄ

„ԿԵՏՏԻ ԲՈՍՍ“

Բ. ՍԵՄԱԴԵՆԻ ԿԻԵԻՈՒՄ

Գլխաւոր պահեստը լէքսանդր Վենցելի մօտ, Պետերբուրգում, Բոպոխովայա, 33, Վաճառւում է Ռուսիայի բոլոր գեղացիներում և գեղատ. խանութներում։

Գինն է ձրագէ արկղիով 25 յոպէկ։

(М.) 20—13

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ ԵԻ ՎԱՃԱՌՈՒՄ Է

«ԳԼԽՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ»

Լ Է Պ

Թիֆլիսի կեանքից

Հեղինակութիւն ԼՈՒՄԱՑԻ

Դիմել այս հասցէով՝ Тифлисъ, типографія Главноначальствующаго Сергею Назарьянцу.

Վաճառւում է նաև կեդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում.

(N) 3—2

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ համար հարկաւոր է փեռչ, որ պէտք է աւանդէ շաբաթական 12 դաս։ Յանկացողները թող բարեհաճեն յայտնել իրենց պայմանները հոգաբարձութեան մինչև յունիսի 15-ն։

Անդամ հոգաբարձութեան՝
Գ. Տէր-Խաչատրեանց

(662) 3—4

ՐՆԳԼԻԱՑԻՆ ԼԵԶՈՒԻ ԻՒՈՒԹՅԻՆ Մ. ՄԱՒՐՏԱԴԸ ամառս Թիֆլիսումն կը մնայ, եթէ կունենայ 4—8 աշակերտ անգլիերէն սովորեցնելու համար։ Իւրաքանչիւր աշակերտ վճարում է 10 ր. ամսական։ Լաբորատորնայա, 4.

(351) 2—3

ՄՈՒԱՅՆԱՑՈՒՆ ԱՇԽԱՐՀԻ

Առաջին և երկարատև դերը — 60 կ. երկրորդը — 50 կ., երկրորդ անգամ — 1 ր.։ Ձանազարհանձնաժողովում է գնում իւրաքանչիւր անգամ 10 կ.։

Գրքերն 7 կ.։ Կոմիտէ Тифлисъ, Николаевская, №10, архитектору А. Джугурянъ. կամ Թիֆլիսի գրավաճառներին։

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Կիրակի, յունիսի 18-ին

ԵՐԳԻՉ Ն. Կ. ՇԱՀՂԱՄԻՐԵԱՆԸ

մասնակցութեամբ պիանիստ Թ. Ա. ԿԱԶԻՆՍԿԱՅԻ կըտայ

Երկրորդ և հրաժեշտի

ԿՈՆՑԵՐՏ

Տոմսակները վաճառւում են թատրոնի կասսայում. և Մ. Սափարովի խանութում, Երևանեան հրապարակ, տուն Սամբաթովի, հեռախօս № 298

Սկիզբն է երեկոյեան 8½ ժամին

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ

աւագների խորհուրդը յայտնում է իւ գիտութիւն պ. պ. անգամների և կանդիտատների, որ ԸՆԴՀԱՆՈՒԿԱՆ ԵՐԿՈՒՑԹՆԵՐԸ ժողովարանի ամարային շինութեան մէջ նշանակւում են ամեն շաբաթ երկուշաբթի և շաբաթ օր օրերը։ Երեխաների մուտքն ընտանեկան երեկոյթների օրերին արգելւում է, իսկ սովորական օրերին երեխաները կարող են մնալ ժողովարանում միայն մինչև ժամը 9-ն երեկոյեան։

(352) 2—1

Լոյս տեսաւ

ԻՎԱՆ ՏՈՒՐԳԵՆԵՎԻ

„ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ“

(Стихотворенія въ прозѣ)

Թարգմանեց ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ

Գինն է 50 կ. Ճանապարհածախսով 60 կ.

Յանկացողները դիմում են Թիֆլիս կենգրոնական գրավաճառանոցին կամ թարգմանչին՝ Москва, Новая Тасманная, домъ Шибаевой, контора М. А. Шоршорова, Александру Цатурянъ.

(666) 3—1

BATEAUX a VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET Cie

ՆԱՒԱՊՆԱՅՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

„Ն. ՊԱՔԷ ԵԻ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղիղ երթեւեկութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷՅԼ երկու չաբաթը մի անգամ։

Բաթումից Մարսէյլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Պոլիս քաղաքները։

Բաթումից դուրս է գալիս չորեքշաբթի, մայիսի 14-ին (յունիսի 26-ին) «Մինգրելի» չոգենաւը, նաւապետ՝ «Փիրուէն»։

Բաթումից Պարիզ հաղորդակցութեան առմատներն սովորական գինն ունին։

Ապրանք յանձնելու կամ ճանապարհորդութեան վերաբերեալ տեղեկութիւնները տանելուհամար դիմել

Բաթումում—պ. Վ. ԻԿՍՈՒՐ ԴԱՐՆՈՑԻՆ, Նաբերեժնայա։

Թիֆլիսում—պ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիօնի փողոց, քարվանս. Դէպոյ պ.

Բագուում—պ. Սամուէլ Դիլղարեանին, Կալիւբեակինսկայա հրապարակ։

Նովոռոսիյսկում—պ. ԼՈՒԻ ՌԵՆՈՑԻՆ։

(316) 20—9

ՆԵՐԿԱՅ 1895 Թ. ՍԿՍԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵԼՈՒ Է ԹԻՖԼԻՍՈՒՄ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ

ԴԻՍԱՐԵԱՑ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

ՆՊԱՏԱԿ

ա. Հաւաքել և մշակել հայ ազգագրութեան վերաբերեալ նիւթեր.

բ. Ծանօթացնել ընթերցողներին ընդհանուր ազգագրութեան և առաջնորդել նիւթեր հաւաքելու։

ԾՐԱԳԻՐ

ա. Տեղագրութիւն Հայաստանի և հայ գաղութների։

բ. Պատմական և մատենագրական յօդուածներ հայոց և նրանց հետ չփուղ ազգերի մասին։ *)

գ. Վիճակագրութիւն հայոց և համեմատութիւններ։

դ. Մարդաբանական հետազօտութիւններ և համեմատութիւններ։

ե. Հնախօսութիւն Հայաստանի և համեմատութիւններ։

զ. Ազգագրութիւն և ցեղագրութիւն։

է. Հայոց բանաւոր գրականութիւն. (ժողովրդական ձայնագրուած եղանակներ.) ը. Նիւթ. բ. ուսումնասիրութիւն։

թ. Հայ գաւառաբարբառների ուսումնասիրութիւն. բառ և ոճ։

ժ. Ազգային իրաւաբանական սովորութիւններ։

ժա. Դրախօսութիւն ա. Հայերէն և օտար լեզուներով հայ ազգագրութեան և բ. ընդհանուր ազգագրութեան վերաբերեալ գրքերի և յօդուածների։

ժբ. Այլեայլք։

ժգ. Յայտարարութիւններ։

Ներկայ 1895 թ. հրատարակուելու է միայն մի գիրք, մեծագիր առնուազը 400 երեսից բաղկացած։

Բաժանորդագինն է 5 ֆրանկ կամ 2 րուբլի կանխիկ։

Դիմել։ Rédaction de la Revue «Azgagraka n thérth» Tiflis (Caucase). կամ Въ Редакцію журнала «Азгаграканъ тертъ.» Тифлисъ.

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՐ. ԼԱԼԱՑԵԱՆ

*) Ծանօթ.—Այս և վերոյիշեալ մասն ազգագրութեան վերաբերեալ ծրագրով և ծաւալով։

Ասենք, բոլորին պարզելու համար, որ «Ազգագրական Թերթը» իւր կազմած համեմատ բոլորովին հեռու է մնալու քաղաքական և կուսակցական հարցերից։

3—2

Тифлисъ Доз. Цензурою 16-го Іюня 1895 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А. О. Меликъ-Шахназаріанца Воронц. Набережн. Церковный домъ